

Ա.Բ.ԲԱ - ՀԱՅԻՐ

ԳՐՊԾ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔ. ՈՒԼՈՒՀՈՋԵԱՆ

(ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

Մարդկային կեանքի ամենէն զեղեցիկ երեւոյթներէն մէկն է այն պարագան երբ անձ եւ անուն, մարդ եւ տիպոս, անհատ եւ դիրք ներդաշնակ միութիւն մը կը կազմեն, որուն մէջ զօրութեամբ կ'ըլլայ այլ-եւս զանազանել ինք իրմով եղող մարդը եւ անոր տրուած հանդամանքը: Այլ խօսքով, երբ անուն, տիպոս եւ մակդիր անպայման գլխադրով սկսելու պէտք չունին մարդը բնորոշելու համար: Երբ, Վեհափառ վեհ-ա-փառ է, Պապը՝ պապ եւ Արքայազը՝ արքա-հայր...

Անցնող երկու տարիներու ընթացքին հոգեւորականներ մեկնեցան այս աշխարհէն, որոնք թէեւ տարբեր պայմաններու տակ, տարբեր ճամբաներով եւ տարբեր ձեւերով, բայց նոյն այս ճամբաներով միանալու հանդիսացան: Զարեհ Վեհափառը, Յովհաննէս Ի. Գ. Պապը, եւ ահա այս տարւոյն Մայիսի 16ին Վեհափառ Միաբանութեան Սրբաճառը՝ Գրպօ. Սրապիոն Արքեպս. Ուլուխոնեան:

Բոլոր անոնք, որոնք ճանչցած էին հանգուցեալ Արքայազը, անխոր զգացին որ անոր փառանքովով բարեկամ մը կորսնցուցին, մտերիմ անձ մը, շատերու համար՝ հայր մը: Որովհետեւ կարելի չէր ճանչնալ զինք ու չմտերմանալ իրեն առաջին իսկ հանդիպումով: Իր անձէն ճառագայթող մարդկային զրաւութեան ոյժ մը կար, որուն կը հաղորդուէր իրեն հանգիստ մարդը, մանաւանդ երիտասարդները, որոնց միշտ կը յայտնէր ինքզինք բարութեամբ եւ զնահատանքի զգացումներով եւ տրամադրութիւններով:

75 տարիներու իր կեանքը (ծն. 1890ին Խարբերդի Դատեմ գիւղը), եւ մանաւանդ յիշատակայ իր քահանայական ծառայութիւնը, հայ ժողովուրդի համայնական

կեանքի ապրումներուն հետ սերտօրէն չաղախուած եղաւ: Իր զգացումներով, մտածումներով, մտահոգութիւններով եւ գործունէութեամբ հայ կեանքի ծառին վրայ բացուած ճիւղ մը եղաւ, հաւատարիմ՝ Միաբանութեան Սրբաճառին իսկական կոչումին եւ հարազատ աւանդութեան:

Ս. Ղազարու մենաստանին մէջ, ուր հայ կեանքի արձագանդները մամուլի էջերով եւ այցելուներու պատմումով կը հասնին ամէն օր, Ուլուհոնեան Արքայազը եղաւ անկեղծ եւ բարութեամբ օծուն հոգիով աղօթողը իր ժողովուրդին, իր Միաբանութեան եւ համայն մարդկութեան համար: Կեանքին միւս մասը անցուց վանական շրջանակի եւ միջոցառումի մէջ (1935էն մինչեւ 1964 Արքայազը պաշտօն վարելով): Այդօր ու խոհում անբաժան եղան իր կեանքէն: Իր հոգեկան կեանքի հարստութիւնը շատ բան կը պարտի ինքնաստիճանին կապուած Ս. Ղազարու մենաստանը յատկանշող գլխաւոր եւ զեղեցիկ դիմերէն մէկն է:

Արքայազը զիրքին եւ պաշտօնին մէջ իր ճառագայթները բաւ բարեկեցութեամբ մը - Դպրոցներ՝ Հայկազի, Աղեքսանդրիոյ եւ Պուէնոս Այրէսի մէջ, ընծայարան՝ Պրեֆատայի (Լիբանանի) մէջ. ընդարձակում Ս. Ղազարու կղզեակին, ապագայի աւելի բեկուն եւ աւելի ընդարձակ գործունէութեան որպէս նախապայման. համազգային տարողութեամբ տօնակատարութիւններու կազմակերպում, ինչպէս «Բազմավէպ»ի հարիւրամեակի, Միաբանութեան Սրբաճառին հիմնադրութեան 250ամեակի, եւն. Վանական իր ամբողջ

գործունէութեան ընթացքին հայրական հոգածութեան ոգին եղաւ տիրապետող ոյժը: Այս էր իր գործունէութեան մեթոտը - ազդել հոգիներուն՝ անսահման բարութեան ժպիտով: Գիտէր լսել իր շրջապատի մարդիկը, միաբան թէ բարեկամ: Արժէք կու տար ուրիշներու կարծիքներուն եւ տեսակէտներուն: Նկատի կ'առնէր եւ կը յարգէր իր օգնականներու թելադրութիւնները: Ինք էր նմաներ այն անհատներուն, որոնք սոսկ անհատական եւ յաճախ խիստ հեղինակութեամբ կը վարեն հաստատութիւններ: Կը մարմնացնէր առաջնորդի այն տիպարը, որ միաբանութեամբ Միաբանութիւնը կը կառավարէ: Իր գէնքը հայրական սէրն էր, իր անձէն արտահոսող բայց Աստուծոյ բերող այն բարութիւնը, որուն դիմաց կը մեղմանան կիրքերը, կը հանդարտին միտքերը եւ կը ստեղծուի բազմացուած ներդաշնակութիւնը, որ այնքան անհրաժեշտ է համայնական կեանքի առողջ եւ առօրէ պտղաւորումին համար: Զինք զերազանցօրէն յատկանշող սէրն ու բարութիւնը, ինչպէս հարազատ բնութիւնն է իսկական սիրոյ եւ բարութեան՝ կը ճառագայթէին իր վանական շրջապատէն, միաբանական շրջանակէն անդին՝ ամէն տեղ ուր այցելէր, Ամերիկա կամ Միջին Արեւելք, եւ բոլոր անոնց վրայ, որոնք հանդիպէին իրեն:

Այդ ճառագայթին սիրով եւ ջերմօրէն ապրուած հայութեամբ Միաբանութեան Միաբանութեան կապեց կամ կապուած պահեց բազում հոգիներ առանց դաւանաբանական կամ դադափարական խտրութեան: Հայութիւնը իր մէջ արիւնին պէս հարազատ էր եւ ինքնարուզիս ու առինքնող ձեւով կ'արտայայտուէր թէ՛ խօսքի եւ թէ՛ գործի մէջ հաւատարմապէս: Հայրենի գիւղէն ժառանգած հայ մաքուր ապրումները անխաթար մնացին իր մէջ եւ տոկաներու գէմ, որոնք անխուսափելիօրէն հասան իրեն Եւրոպայի զանազան քաղաքներուն մէջ, Հռոմէն մինչեւ Փարիզ:

Սէր ու յարգանք ունէր Հայց. Առաքե-

լական Եկեղեցւոյ հանդէպ: Անխտրական ոգիով եւ անկեղծ վերաբերումով մօտեցաւ Հայց. Եկեղեցւոյ բոլոր պաշտօնեաներուն, Վեհափառ Կաթողիկոսէն մինչեւ պարզ ծխատէր քահանան: Զեմ կրնար յուզումով չլիչել այն վայրկեանը երբ առաջին անգամ, հինգ տարիներ առաջ, ոտք դրի Ս. Ղազարու կղզեակին վրայ, եւ երբ մտայ իր զրաւեանակին մէջ՝ ձեռքերը հայրարար ուսիս դնելով քովը նստեցուց եւ խօսեցաւ այնպէս ինչպէս պիտի խօսէր իր հարազատ միաբանին: Քրիստոնէական սէր, հայկական ապրում եւ մարդկային ազնուութիւն - երեք գոյներն էին իր անձէն բղխող հոգեկան ճառագայթին:

Դարձեալ, Միաբանութեան Սրբաճառը պատմական ճամբուն հետեւողութեամբ՝ եղաւ քաջալերողը մշակութային գործունէութեան: Դարու ոգին բնականօրէն ազդեց կղզիին վրայ: Անցեալի գիտնական մեծ դէմքերուն յաջորդներու թիւը նուազեցաւ: Բայց ճիշդ մնաց միշտ պրկուած: Եւ հետզհետէ ինքզինք արժանապատիւ արտայայտող երիտասարդ սեւրունդ մը կազմուեցաւ, որ վստահաբար վառ պիտի պահէ Միաբանութեան ջահը՝ հայ մշակութիւն ծառայութեան իւղով:

Երբ կ'ողբանք իր մահը ու կ'աղօթենք իր հոգւոյն համար, պարտք կը զգանք նաեւ մեր աչքերը սեւեռել դէպի ապագան եւ անսահման ոյժ մաղթել նորընտիր Արքայազը՝ Հ. Հմայեակ Վարդ. Կէտիկեանին եւ իր Միաբանութեան բոլոր անդամներուն՝ քաջակորով նուիրումով պայծառացնելու Միաբանութեան Միաբանութեան առաքելութիւնը ի փառս Քրիստոսի Եկեղեցւոյն եւ հայ ժողովուրդին: Թող նոր ոյժի եւ առաւել զոհաբերման ներշնչութեամբ զառնայ Ուլուհոնեան Արքայազը մաքուր յիշատակը:

Արքայազութեան հոգին եղաւ իր կեանքի մայր ջիւղը:

Արքայազութեան լուսապսակը թող ըլլայ իր փառապսակը:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ